



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱԱԼԻՔՆԵՐՈՒՄ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ
2009



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունները/դաշինքը	3
Հայաստանի հեռուստաալիքներում 2009 թվականի մայիսի 31-ի Երեւանի ավագանու ընտրությունների լուսաբանման Երեւանի մամուլի ակումբի դիտարկման հաշվետվություն	
Ընդհանուր տեղեկատվություն դիտարկման մասին	4
Չետագոտված ՁԼՄ-ների ցանկը եւ համառոտ բնութագիրը	8
Միջանկյալ հաշվետվություն (ապրիլի 16 - մայիսի 15, 2009)	9
Եզրափակիչ հաշվետվություն (ապրիլի 16 - մայիսի 29, 2009)	11
Աղյուսակներ եւ գրաֆիկներ	
Ապրիլի 16 - մայիսի 1, 2009	20
Մայիսի 2-29, 2009	34

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ԴԱՇԻՆՔԸ**

2009թ. մայիսի 31-ին Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցել են 6 կուսակցություն եւ մեկ նախընտրական դաշինք:

2009թ. հունիսի 6-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է Երեւանի ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները: Համաձայն ՀՀ ԿԸՀ հրապարակած արդյունքների՝ կուսակցություններին/դաշինքին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ (*տոկոսներով*):

	Կուսակցություն/դաշինք	%
1.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	22.65
2.	Ժողովրդական կուսակցություն	2.15
3.	«Հայ ազգային կոնգրես» նախընտրական դաշինք	17.57
4.	Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցություն	4.60
5.	Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն	0.49
6.	Հայաստանի հանրապետական կուսակցություն	47.43
7.	«Օրինաց երկիր» կուսակցություն	5.11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱԿԱԼԻՔՆԵՐՈՒՄ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 31-Ի ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Դիտարկումն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ Բաց հասարակության ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ, 2009 թվականի ապրիլի 16-ից մինչև մայիսի 29-ը: Դիտարկումն անցկացվել է երկու փուլով. **առաջին փուլն** ընդգրկել է 2009թ. ապրիլի 16-ից մայիսի 1-ը (նախընտրական քարոզչության նախաշեմի), իսկ **երկրորդ փուլը**՝ մայիսի 2-ից 29-ը (նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիտարկումն ընդգրկել է **7 հեռուստաալիք**. *համերկրային 3 հեռուստաալիք* - Հայաստանի հանրային հեռուստաընկերության առաջին ալիք (Հ1), «ԱԼՄ», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), *մայրաքաղաքային 4 հեռուստաալիք* - «Արմնյուզ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ»:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել վերը նշված հեռուստաալիքների երեկոյան «փրայմ-թայմի» այն բոլոր հաղորդումները, որոնցում եղել է Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած վեց կուսակցությունների եւ մեկ նախընտրական դաշինքի եւ դրանց առաջնորդների կամ ներկայացուցիչների հիշատակում, ինչպես նաեւ այդ կուսակցությունների/դաշինքի նախընտրական քարոզչությանը հատկացված էթերաժամանակը:

Պաշտոնական ընտրարշավի նախաշեմին եւ նախընտրական քարոզարշավի առաջին երկու օրերին դիտարկվել են **ժամը 18.00-ից մինչև 24.00** էթեր տրվող հաղորդումները: Մայիսի 4-ից դիտարկումը սկսվել է մեկ ժամ առաջ՝ **17.00-ից մինչև 24.00**, ինչը թելադրված է եղել կուսակցությունների/դաշինքի նախընտրական քարոզչական նյութերի ցուցադրման ժամով:

Մասնավորապես, Հ1- ով, համաձայն ՀՀ ԿԸՀ 2009թ. մայիսի 2-ի որոշման, կուսակցությունների/դաշինքի նախընտրական քարոզչությունը հեռարձակվել էր՝ սկսած ժամը 17.15-ից: Ըստ որում, հաղորդումները, որոնք սկսվել, սակայն չեն ավարտվել մինչև ժամը 18.00, մայիսի 4-ից՝ մինչև ժամը 17.00, չեն դիտարկվել: Հաղորդումները, որոնք սկսվել, սակայն մինչև ժամը 24.00 չեն ավարտվել, դիտարկվել են ամբողջությամբ՝ մինչև դրանց ավարտը:

Դիտարկման խնդիրներն էին՝ ստացված տվյալների վերլուծության միջոցով պարզել՝

- հեռարձակող ՁԼՄ-ների (առաջին հերթին՝ հանրային հեռուստատեսության) գործունեության օրենսդրական կարգավորման արդյունավետությունը եւ հեռուստաալիքների կողմից ընտրությունների ժամանակաշրջանում օրենսդրությանը հավատարիմ լինելու աստիճանը,

- Հայաստանի հեռարձակող ՁԼՄ-ների կողմից Երեւանի ավագանու ընտրությունների հանդեպ ուշադրության աստիճանը,

- Հայաստանի հեռարձակող ՁԼՄ-ներով Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքի մասին ընտրազանգվածին տեղեկությունների տրամադրման համարժեքությունը,

- Երեւանի ավագանու ընտրություններին առաջադրված թեկնածուների տեսակետների եւ կարծիքների արտահայտման համար հեռուստատեքստի մատչելիությունը:

Այս խնդիրների իրականացման համար կիրառվել են որակական եւ քանակական հետազոտության մեթոդները: Որակական հետազոտությունը ներառել է Հայաստանում ընտրական գործընթացին առնչվող օրենսդրության եւ այլ պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը, ՁԼՄ-ների ղեկավարների, լրագրողների, քաղաքական գործիչների եւ հասարակայնության ներկայացուցիչների հետ զրույցները, ինչպես նաեւ՝ նախընտրական շրջանում ՁԼՄ-ների գործունեության վերաբերյալ նրանց հրապարակային հայտարարությունների եւ արտահայտած տեսակետների վերլուծությունը: Քանակական դիտարկումը ներառել է անմիջականորեն հեռուստահաղորդումների հաշվարկն ու չափումները:

Դիտարկման մեթոդաբան

Հետազոտված եթերի բոլոր նյութերը բաժանվել են երկու տեսակի.

1. Խմբաձրական լուսաբանում,

2. Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքի նախընտրական քարոզչություն (քաղաքական քովազդ):

Դիտարկման բոլոր անհրաժեշտ տվյալները գրանցվել են երկու աղյուսակում:

Աղյուսակ 1-ում ներկայացվել են տվյալները Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքի եւ դրանց ընտրական ցուցակների առաջին երկու համարների, իսկ **Աղյուսակ 2**-ում՝ կուսակցությունների/դաշինքի ընտրական ցուցակների առաջին համարների վերաբերյալ:

1. Հետազոտության հիմնական միավոր է հանդիսացել հեռուստանյութը:

Հեռուստանյութ ասելով՝ նկատի է առնվել.

Եթերի թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ. հաղորդավարական տեքստով ներկայացված առանձին տեղեկությունը,

գ. թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բլյուն եւ այլն)

հաղորդումից առանձնացած մասը (բաժին, սյուժե), որը շոշափել է տարբեր

թեմաներ/խնդիրներ,

դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են որպես այն նյութի մաս, որին վերաբերել են,

ե. հեռուստասյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է որպես այդ սյուժեի (ռեպորտաժին եւ այլն) մաս:

2. Հետազոտված հեռուստաալիքների խմբագրական լուսաբանումներում

դիտարկողներն արձանագրել են հաշվառել են Երեւանի ավագանու ընտրություններին

մասնակցած 7 կուսակցությունների/դաշինքի **հիշատակումները (միավորներով),**

հաշվառվել են նաեւ թեկնածուների **նշանային/բնութաձրիչ** (դրական [+], բացասական

[–] եւ չեզոք [0]) հիշատակումները, ինչպես նաեւ նրանց հատկացված **եթերաժամանակը (վայրկյաններով)**: Կուսակցությունների/դաշինքի «հաշվին» են գրանցվել նաեւ դրանց ներկայացուցիչների հիշատակումները (նշանային բնութագրումը) եւ եթերաժամանակը (հայտարարություններ, ելույթներ, նրանց խոսքից մեջբերումներ, ինչպես նաեւ այլ անձանց կողմից նրանց գործունեության մասին կարծիքներ, դատողություններ): Ընդամին, թեկնածուների ընտրական ցուցակների առաջին երկու համարների հիշատակումները (նշանային բնութագրումը) եւ եթերաժամանակը արձանագրվել են անկախ այն բանից, թե նրանք ինչ կարգավիճակով են ներկայացել: Կուսակցությունների/դաշինքի այլ ներկայացուցիչների, այդ թվում նաեւ նախընտրական շտաբների ներկայացուցիչների եւ վստահված անձանց պարագայում վերջիններիս հիշատակումը (նշանային բնութագրումը) եւ եթերաժամանակն արձանագրվել է միայն այն դեպքում, երբ հեռուստանյութում ինչ-որ կերպ ընդգծվել, առանձնահատուկ կերպով շեշտվել է նրանց կուսակցական պատկանելությունը:

Նշանային/բնութագրիչ (դրական, բացասական) են համարվել նյութում կուսակցությունների/դաշինքի կամ դրանց ներկայացուցիչների մասին հեռուստադիտողների շրջանում միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն ստեղծած հիշատակումները: Երբ նման միանշանակ տպավորություն չի եղել, հիշատակումն արձանագրվել է որպես չեզոք: Դիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվել են հոգուտ հիշատակումը չեզոք համարելու: Բացի այդ, եթե նյութում տեղեկացվել է այն մասին, թե ինչ-որ մի անձ/կազմակերպություն հրապարակավ հայտարարել է կուսակցությունների/դաշինքին իր աջակցելու/չաջակցելու մասին, ապա տվյալ հիշատակումն արձանագրվել է, համապատասխանաբար, որպես դրական կամ բացասական:

Յուրաքանչյուր մեկ հեռուստանյութում յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի կամ նրա ներկայացուցիչի հաշվին արձանագրվել է միայն մեկ հիշատակում եւ միայն մեկ նշանային բնութագրում:

Հիշատակում է համարվել նաեւ կուսակցությունների/դաշինքի ընտրացուցակների առաջին երկու համարների՝ հեռուստակադրում ցանկացած հայտնվելը, եթե այդ կադրը նրան վերաբերող նյութի մաս չի եղել: Եթե կադրում հայտնվելը եղել է այնպիսի նյութի մաս, որում տվյալ կուսակցությունը/դաշինքը հիշատակվել է, ապա դա չի արձանագրվել որպես լրացուցիչ հիշատակում:

Կուսակցությունների/դաշինքի ընտրացուցակների **առաջին համարի** հիշատակումը (նշանային բնութագրումը) եւ եթերաժամանակը գրանցվել է թե՛ **Աղյուսակ 2**-ում, թե՛ **Աղյուսակ 1**-ի՝ տվյալ կուսակցությանը/դաշինքին հատկացված սյունակում:

Ընտրական ցուցակի առաջին համարին հատկացված ընդհանուր եթերաժամանակը գրանցելուց բացի, հետազոտվել է նաեւ, թե առաջին համարն ինչ կարգավիճակով է հանդես եկել: Այդպիսով, խմբավորվել եւ Աղյուսակ 2-ի համապատասխան սյունակում մուտքագրվել է այն եթերաժամանակը, որը հատկացվել է առաջին համարին՝ լուսաբանելով նրա.

1. **Պաշտոնական եւ մասնափտական օրոժուներությունը,**
2. **Մասնափտական կամ պաշտոնական պարտականությունները կատարելուն անմիջականորեն չառնչվող օրոժուներությունը:**

3. Դիտարկողներն արձանագրել ու չափել են հեռարձակող ՁԼՄ-ներով (**ժամը 17.00-ից մինչեւ 24.00**) կուսակցությունների/դաշինքի նախընտրական քարոզչությանը հատկացված **եթերաժամանակը (վայրկյաններով)**, որը եթեր է գնացել **«նախընտրական քարոզչություն»** լուսագրով: Ըստ որում, առանձին չափվել է վճարովի եւ անվճար

քաղաքական գովազդի ծավալը: Մինչեւ ժամը 17.00 սկսված, սակայն այդ ժամին չավարտված քաղաքական գովազդի բլոկը չի դիտարկվել: Մինչեւ ժամը 24.00 սկսված, սակայն այդ ժամին չավարտված քաղաքական գովազդի բլոկը դիտարկվել է ամբողջությամբ՝ մինչեւ դրա ավարտը:

4. Դիտարկողներն առանձին ցուցակով արձանագրել են հետազոտված հեռուստաալիքների **բանավիճային ծրագրերի մասնակիցներին** («հարցազրույց», «հյուր ստուդիայում», «թոք շոու» ժանրի)՝ նշելով հեռուստաալիքը, հաղորդման անվանումը, հրավիրված մասնակիցների անունները եւ պաշտոնները: Այսօրինակ հաղորդումներում ընտրացուցակների առաջին կամ երկրորդ համարի մասնակցությունը գրանցվել է տվյալ կուսակցության/դաշինքի հաշվին՝ անկախ այն բանից, թե ինչ կարգավիճակով են նրանք հրավիրվել: Երբ որ բանավիճային հաղորդման մասնակիցը եղել է ո՛չ թե կուսակցությունների/դաշինքի ընտրացուցակների առաջին կամ երկրորդ համարը, այլ կուսակցությունների/դաշինքի այլ ներկայացուցիչ, նախընտրական շտաբի անդամ կամ վստահված անձ, եւ հեռուստահաղորդման մեջ այդ կարգավիճակը հատուկ նշվել է, ապա բանավիճային ծրագրերի մասնակիցների ցուցակում այդ հաղորդումը գրանցվել է տվյալ կուսակցության/դաշինքի հաշվին:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ

ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՀՀՀ Առաջին ալիք, Հ1) -

հանդիսանում է Հանրային հեռուստառադիոընկերության մի մասը: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Առաջին ալիքի օրական հեռարձակման տևողությունը՝ 19,5 ժամ մարզերում եւ 24 ժամ Երեւանում:

«ԱԼՄ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000-ին: Հիմնադիր՝ «ԱԼՄ Հոլդինգ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տևողությունը՝ 24 ժամ:

ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱԿԻՔ (Հ2) - մասնավոր հեռուստաընկերություն:

Հիմնադրվել է 1998-ին: Հիմնադիր՝ «Հայկական Երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ: Օրական հեռարձակման տևողությունը՝ 18 ժամ:

«ԱՐՄՆՅՈՒԶ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2002-ին: Հիմնադիր՝ «Արմնյուզ» ՓԲԸ: Շուրջօրյա լրատվական ալիք է, որը վերահեռարձակում է նաեւ «Եվրանյուզ»-ի ծրագրերը:

«ԵՐԿԻՐ ՍԵՂԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004-ին: Հիմնադիրը՝ «Հուսաբեր» ՓԲԸ: Օրական հեռարձակման տևողությունը՝ 24 ժամ:

«ԿԵՆՏՐՈՆ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2002-ին: Հիմնադիրը՝ «ՇԱՐՄ» ՓԲԸ: Օրական հեռարձակման տևողությունը՝ 19 ժամ:

«ՇԱՆԹ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994-ին: Հիմնադիր՝ «Շանթ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տևողությունը՝ 24 ժամ:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԱՊՐԻԼԻ 16 - ՄԱՅԻՍԻ 15, 2009)

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ (ԱՊՐԻԼԻ 16 - ՄԱՅԻՍԻ 1, 2009) դիտարկված բոլոր 7 հեռուստաալիքների խմբագրական լուսաբանումներում կուսակցությունների/դաշինքին հատկացված ընդհանուր եթերային ժամանակի հաշվարկով առաջատարը եղել է Ժողովրդական կուսակցությունը (ԺԿ) - 44,481.6 վրկ: Նրան հաջորդել է Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցությունը (ՀՅԴ) - 33,331.3 վրկ: Մոտավորապես, հավասարաչափ լուսաբանում են ստացել Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) - 12,289.5 վրկ եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ) - 12,043.8 վրկ: Տրամադրված ընդհանուր եթերային ժամանակը ընտրություններին մասնակցած մյուս երեք կուսակցությունների/դաշինքի միջև բաշխվել է հետևյալ կերպ. «Օրինաց երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 5,232.5 վրկ, Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ)՝ 4,492.4 վրկ, Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն (ՀԱՍԿ)՝ 127.1 վրկ: Սույն ցուցանիշով՝ նախընտրական քարոզչության նախաշեմին առավել լայն լուսաբանում են ստացել այն կուսակցությունները, որոնց գործունեությանն ավելի հաճախակի է անդրադարձել այս կամ այն հեռուստաալիքը: Այսպես՝ ԺԿ-ն լայնորեն լուսաբանվել է «ԱԼՄ»-ով, ՀՅԴ-ն՝ «Երկիր Մեդիայով», ՀՀԿ-ն՝ «Արմնյուզ»-ով եւ ԲՀԿ-ն՝ «Կենտրոնով»:

Նախընտրական քարոզչության նախաշեմին դիտարկված 7 հեռուստաալիքներով առավել հաճախ հիշատակվել է ՀՅԴ-ն (378 հիշատակում), ՀՀԿ-ն՝ (229), ԲՀԿ-ն՝ (154) եւ ՀԱԿ-ը՝ (120): Եթերաժամանակի հաշվարկով առաջատարը հանդիսացող ԺԿ-ն՝ հիշատակումների հաճախականության հաշվարկով (72) միայն հինգերորդն է: Այնուհետեւ գալիս են ՕԵԿ-ը (59) եւ ՀԱՍԿ-ը (16): Կուսակցությունների/դաշինքի հիշատակումները գերակշռող՝ 94,6%-ով եղել են չեզոք:

Դրական հիշատակումներ ամենաշատը ստացել են ՀՀԿ-ն (22) եւ ԲՀԿ-ն (19, որից 15-ը արձանագրվել է «Կենտրոնի» եթերում): Մյուս կուսակցությունները հատուկեմտ դրական հիշատակումներ են ստացել: ՀՀԿ-ի բոլոր 22 դրական հիշատակումներն էլ (որից 16-ը եղել է «Արմնյուզ»-ով) վերաբերել են կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը ներկայացնող՝ գործող քաղաքապետ Գագիկ Բեգլարյանին: Դիտարկված բոլոր հեռուստաալիքներում արձանագրված 8 բացասական հիշատակումներից 3-ական բաժին են ընկել ՕԵԿ-ին եւ ՀԱԿ-ին, երկուսը՝ ՀՀԿ-ին:

Դիտարկված հեռուստաալիքներով նախընտրական քարոզչության նախաշեմին կուսակցությունների/դաշինքի կողմից առաջադրված թեկնածուների ընտրական ցուցակների առաջին համարներին՝ այսինքն Երեւանի քաղաքապետի թեկնածուներին հատկացված եթերաժամանակի առումով անվերապահ առաջատարը եղել է ԺԿ առաջնորդ Տիգրան Կարապետյանը՝ 44,372 վրկ, այն դեպքում, երբ 2-րդ տեղում գտնվող Գագիկ Բեգլարյանը (ով գլխավորում էր ՀՀԿ-ի ընտրացուցակը եւ հետագայում դարձավ քաղաքապետ) ստացել էր շուրջ 7 անգամ պակաս լուսաբանում (6,056.5 վրկ): Ընդ որում, դիտարկված 7 հեռուստաալիքներում ԺԿ-ին տրամադրված ամբողջ եթերաժամանակի 99,8%-ը նվիրվել է հենց ԺԿ առաջնորդ Տիգրան Կարապետյանին:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋԱՐՇԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹՆԵՐԻՆ (2-15 ՄԱՅԻՍԻ, 2009) Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցություններին/դաշինքին վերաբերող խմբագրական լուսաբանումների եթերային ժամանակը նախորդ փուլի համեմատ ավելացել է մեկուկես անգամ: Դիտարկված հեռուստաալիքներով

կուսակցություններին/դաշինքին տրամադրված ընդհանուր եթերային ժամանակի հաշվարկով առաջատարը կրկին եղել է ԺԿ-ն (57,103.3 վրկ): Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է ԲՀԿ-ն (32,415.6 վրկ)՝ հետեւում թողնելով երրորդ տեղում հանգրվանած ՀՀԴ-ին (26,057.1 վրկ): Նախորդ փուլի համեմատ՝ ՕԵԿ-ն ավելի շատ լուսաբանում է ստացել եւ դարձել չորրորդը (21,276.1 վրկ), մինչդեռ ՀՀԿ-ն, ընդհակառակը, երրորդից իջել է հինգերորդ տեղ (17,624.1 վրկ): ՀԱԿ-ը եւ ՀԱՍԿ-ը, ինչպես եւ նախորդ փուլում, եզրափակել են աղյուսակը՝ ստանալով համապատասխանաբար 9,442.8 եւ 4,134.6 վրկ: Ինչպես հետազոտության նախորդ փուլում, այնպես էլ նախընտրական քարոզարշավի առաջին 14 օրերին, բոլոր 7 հեռուստաալիքներով ԺԿ-ին հատկացված ամբողջ եթերաժամանակը (98.5%) փաստորեն վերաբերել է ընտրացուցակը գլխավորած Տիգրան Կարապետյանին:

Ինչ վերաբերում է լուսաբանման բնույթին, հետազոտության նախորդ փուլում արձանագրված միտումներն ընդհանուր առմամբ պահպանվել են: Պաշտոնական նախընտրական քարոզարշավի առաջին կեսում, դիտարկված 7 հեռուստաալիքներում հիշատակումների ճնշող մեծամասնությունը (97.1%) եղել է չեզոք: Դրական բնութագրմամբ առավել հաճախ (11 անգամ) հիշատակվել են ՀՀԿ-ն (1 բացասական հիշատակման դիմաց), ԺԿ-ն (10) եւ ԲՀԿ-ն (9): Ըստ որում, վերջին երկու կուսակցությունների վերաբերյալ բացասական հիշատակումներ չեն եղել: ՀՀԿ-ի 11 դրական հիշատակումներից 5-ը եղել է «Արմնյուզ»-ով, ըստ որում, բոլորն էլ վերաբերել են ընտրացուցակի առաջին համարին՝ Գագիկ Բեգլարյանին:

Այստեղ հարկ է նշել նաեւ, որ «Արմնյուզ»-ով որեւէ այլ կուսակցության/դաշինքի ներկայացուցիչ նշանային/բնութագրիչ հիշատակում չի ստացել: ԺԿ-ի բոլոր 10 դրական հիշատակումներն արձանագրվել են «ԱԼՄ»-ի եթերում եւ բոլորն էլ հնչել են կուսակցության առաջնորդ Տիգրան Կարապետյանի հասցեին: ԲՀԿ-ի 9 դրական հիշատակումներից 6-ը եղել է «Կենտրոնով»: Դիտարկված բոլոր 7 հեռուստաալիքներում նշանային/բնութագրիչ հիշատակումների ցուցանիշով 3-ական դրական եւ բացասական հիշատակումներ է ստացել ՕԵԿ-ը, 1 բացասական՝ ՀԱԿ-ը:

Ինչպես նախընտրական քարոզչության նախաշեմին, այդպես էլ պաշտոնական քարոզարշավի առաջին երկու շաբաթներին կուսակցություններին/դաշինքին, դրանց ներկայացուցիչներին հասցեագրված բոլոր բացասական հիշատակումները եղել են ո՛չ թե հեռուստալրագրողների, այլ հեռուստաբանավեճերի եւ լրատվական ծրագրերի մասնակից անձանց կողմից հնչեցված կարծիքներ:

Նախընտրական քարոզչությանը (քաղաքական գովազդին) դիտարկված բոլոր հեռուստաալիքների կողմից կուսակցություններին/դաշինքին տրամադրված վճարովի հեռուստաեթերից մայիսի 2-ից 15-ը ամենաշատն օգտվել է ԲՀԿ-ն (14,141 վրկ): Նրան հետեւել են ՀՀԿ-ն (4,710 վրկ), ՀՀԴ -ն (3,661 վրկ), ՕԵԿ-ը (3,107 վրկ) եւ ՀԱԿ-ը (3,021 վրկ): Ըստ որում, ՀՀԴ -ն իր վճարովի քաղաքական գովազդն ամբողջությամբ իրականացրել է միայն «Երկիր Մեդիայով»: Համանման պատկեր է արձանագրվել նաեւ ԺԿ-ի դեպքում՝ 856 վայրկյան վճարովի քաղաքական գովազդն ամբողջությամբ հեռարձակվել է «ԱԼՄ»-ով: Բոլոր 7 կուսակցությունները/դաշինքը պաշտոնական նախընտրական քարոզարշավի առաջին 14 օրերին օգտվել են Հ1-ի քաղաքական գովազդի անվճար եթերաժամանակից:

ԵԶՐԱՓՈՒԿ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ԱՊՐԻԼԻ 16 - ՄԱՅԻՍԻ 29, 2009)

ԴԻՏԱՐԿՎԱԾ ԶԵՌՈՒՄՏԱԱԼԻՔՆԵՐՈՎ լուսաբանումը՝ ինչպես նախընտրական քարոզարշավի նախաշեմին (ապրիլի 16 - մայիսի 1, 2009), այնպես էլ նախընտրական քարոզարշավի (մայիսի 2-29, 2009) ընթացքում, դատելով չեզոք եւ նշանային/բնութագրիչ հիշատակումների համամասնությունից, եղել է համեմատաբար անկողմնակալ: Այսպես, նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքի բոլոր հիշատակումների 95.8%-ը եղել է չեզոք: Այս ցուցանիշով Երեւանի ավագանու ընտրություններն էականորեն տարբերվել են 2008 թվականի նախագահական ընտրություններից, երբ համերկային եւ մայրաքաղաքային հեռարձակող ՁԼՄ-ներով թեկնածուներից մեկի վերաբերյալ բացասական ինֆորմացիան աննախադեպ ծավալների էր հասել: Այսուհանդերձ, այս ընտրական քարոզարշավը եւս արտացոլեց Հայաստանի հեռարձակող ՁԼՄ-ներում առկա պրոբլեմային հիմնական տենդենցները:

Ընտրությունների մասնակից 7 քաղաքական ուժերի լուսաբանումն ըստ բնույթի կարելի է պայմանականորեն բաժանել 4 խմբի:

Դիտարկողներն **առաջին խմբում** ներառել են ԺԿ-ն, որին ամենաշատ ուշադրությունն էր հատկացվել (44,481.6 վրկ) ինչպես դիտարկման առաջին կես ամսում (ապրիլի 16 - մայիսի 1, 2009)՝ մինչ նախընտրական քարոզչության, այնպես էլ բուն նախընտրական քարոզչության շրջանում (մայիսի 2-29, 2009)՝ կազմելով 112,144.1 վրկ: Ժողովրդական կուսակցության լուսաբանման հիմնական առանձնահատկությունը եղել է այն, որ նրան հատկացված էթերային ժամանակի ճնշող մեծամասնությունը՝ 94.7% մինչ նախընտրական քարոզչության սկիզբը, եւ 89.1 %՝ նախընտրական քարոզչության շրջանում, եղել է ԺԿ առաջնորդ Տիգրան Կարապետյանին պատկանող «ԱԼՄ» հեռուստաալիքով: Ընդսմին, հենց իրեն՝ Տիգրան Կարապետյանին (որը գլխավորում էր կուսակցության ընտրական ցուցակը), դիտարկման երկու փուլերում էլ բաժին էր ընկել նրա կուսակցությանը «ԱԼՄ»-ի հատկացրած էթերային ժամանակի 99.7%-ը:

Երկրորդ խմբում ներառվել են մինչեւ վերջերս իշխող կոալիցիայի մաս կազմող չորս կուսակցություն. ԲՀԿ (82,291 վրկ բոլոր 7 հեռուստաալիքներով, մայիսի 2-ից 29-ը ընկած ժամանակաշրջանում), ՀՀԴ (66,987.8 վրկ), ՀՀԿ (58,126.2 վրկ), ՕԵԿ (57,113.6 վրկ): Ըստ լուսաբանման միագումար ծավալի՝ այս 4 կուսակցությունները հաջորդել են ԺԿ-ին, սակայն նրանց հանդեպ լրատվամիջոցների ուշադրությունը եղել է շատ ավելի համաչափ, քան ԺԿ-ի դեպքում, եւ բաշխվել է դիտարկված բոլոր հեռուստաալիքների միջեւ:

Առաջին եւ երկրորդ խմբերում ներառված կուսակցություններին միավորում է այն, որ դրանք նախընտրական քարոզարշավի ընթացքում նշանային/բնութագրիչ հիշատակումների հաշվարկով ունեցել են դրական հաշվեկշիռ: Դրանցից 4-ը (բացի ՕԵԿ-ից), հատուկ ուշադրության են արժանացել այս կամ այն հեռուստաալիքի կողմից: Վերելում արդեն ասվեց ժողովրդական կուսակցության եւ «ԱԼՄ»-ի միջեւ գոյություն ունեցող հատուկ հարաբերության մասին, սակայն եւս 3 կուսակցություն, չնայած շատ ավելի պակաս չափով, արժանացել են տեղեկատվական ակնհայտ նախապատվության: ԲՀԿ-ն բացահայտ առաջատար է եղել «Կենտրոնի» եթերում (այն նախընտրական քարոզչության շրջանում ավելի քան երկու անգամ գերազանցել է եթերաժամանակի առումով երկրորդ տեղում ընթացող ՀՀԴ -ին): «Կենտրոնին» է բաժին ընկել ԲՀԿ-ի 19 դրական հիշատակումներից 12-ը: Դաշնակցությունը մրցակցությունից դուրս է եղել

«Երկիր Մեդիա»-ում՝ նախընտրական քարոզչության շրջանում ստանալով բոլոր 7 քաղաքական ուժերին հատկացված լուսաբանումների ծավալի կեսը: ՀՀԴ-ի բոլոր երեք դրական հիշատակումները հնչել են «Երկիր Մեդիա»-ում: Նախընտրական քարոզչության շրջանում ՀՀԿ-ն ՀՀ-ով եւ «Արմենյուզ»-ով առաջատար է եղել ոչ միայն լուսաբանման ծավալով, այլ նաեւ այս հեռուստատալիքների նշանային/բնութագրիչ հիշատակումներով ունեցել է ընդգծված դրական հաշվեկշիռ: 12 դրական եւ 0 բացասական հիշատակում ՀՀ-ով, եւ 9 դրական եւ 0 բացասական հիշատակում «Արմենյուզ»-ով: Պակաս ակնհայտ է եղել ՀՀԿ-ի առավելությունը «Շանթ» հեռուստատալիքով, որտեղ հանրապետականները եթերային ժամանակով մի փոքր առաջ են անցել ԲՀԿ-ից, ընդհանրապես, նշանային/բնութագրիչ հիշատակումներով ստանալով 4 հիշատակում (բոլորն էլ դրական): Ընդհանուր առմամբ բոլոր 7 հեռուստատալիքներով ՀՀԿ-ի նշանային/բնութագրիչ հիշատակումների հաշվեկշիռը (դրական/բացասական) կազմել է 39-9:

Երրորդ խմբում է «Հայ ազգային կոնգրես» նախընտրական դաշինքը, որը մի քիչ հետ է ընկել երկրորդ խմբի քառյակից եւ, բացի այդ, ընտրություններին մասնակցած բոլոր 7 քաղաքական ուժերից միակն է, որ նախընտրական քարոզչության շրջանում նշանային/բնութագրիչ հիշատակումների առումով ունեցել է բացասական հաշվեկշիռ (0 դրական եւ 4 բացասական): Ի տարբերություն առաջին եւ երկրորդ խմբերում ներառված 5 կուսակցություններից 4-ի՝ ՀԱԿ-ը դիտարկված ոչ մի հեռուստատալիքով ընդգծված ուշադրության չի արժանացել: Չնայած այդ դաշինքը նախընտրական քարոզչության շրջանում առաջատարի դիրք է գրավել ՀՀ-ով լուսաբանման ծավալով, սակայն մրցակիցների համեմատ տարբերությունը եղել է ոչ այնքան զգալի:

Վերջապես, **չորրորդ խմբում** ներառված է Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը, որը նախընտրական քարոզչության շրջանում հեռուստատալիքների ուշադրության առումով եղել է բացահայտ հետնապահի դիրքում: Թե՛ ընդհանուր առմամբ, թե՛ դիտարկված 7 հեռուստատալիքներից 6-ով ՀԱԿ-ը ստացել է լուսաբանման ամենաքիչ ծավալը եւ իր մրցակիցներից շատ ավելի քիչ է հիշատակվել: Այն եղել է միակը, որը չի ստացել ոչ մի նշանային/բնութագրիչ հիշատակում: Միակ հեռուստատալիքը, որն այս կուսակցությանը գրեթե նույնքան ուշադրության է արժանացրել, որքան մյուս կուսակցություններին/դաշինքին, եղել է ՀՀ-ը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ մասնակցած կուսակցությունների/դաշինքի ընտրական ցուցակների առաջին համարներից (այսինքն Երեւանի քաղաքապետի թեկնածուներից), ինչպես նշվեց վերելում, լուսաբանումների ծավալով ճնշող առավելություն է ստացել ԺԿ առաջնորդ Տիգրան Կարապետյանը: Նախընտրական քարոզչության շրջանում դիտարկված 7 հեռուստատալիքներով վերջինիս հատկացված միագումար եթերային ժամանակն ավելի քան 5 անգամ գերազանցել է այս ցուցանիշով հաջորդիվ՝ երկրորդ եւ երրորդ հորիզոնականները զբաղեցրած Հեղինե Բիշարյանին (ՕԵԿ-ի առաջին համարը) եւ Գագիկ Բեգլարյանին (ՀՀԿ-ի առաջին համարը, որը հետագայում դարձավ քաղաքապետ): Հատկանշական է, որ ԲՀԿ-ի եւ ՀՀԴ-ի (որոնք լուսաբանման միագումար հաշվարկով երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրած կուսակցություններն են) ընտրական ցուցակները գլխավորած քաղաքական գործիչները «առաջին համարների վարկանիշով» հայտնվել են համապատասխանաբար չորրորդ եւ հինգերորդ տեղերում: Ինչ-որ տեղ դա կարելի է բացատրել նրանով, որ ԲՀԿ-ի նախընտրական քարոզարշավում շեշտը դրվել էր կուսակցության առաջնորդ, ավագանու անդամության թեկնածություն չդրած Գագիկ Ծառուկյանի հեղինակության վրա, իսկ ընտրական ցուցակի առաջին համարը՝ Հարություն Քուչկյանը, հայտնվել էր վերջինիս ստվերում: Դաշնակցության պարագայում գլխավոր դերն, ամենայն հավանականությամբ, խաղաց այս կուսակցության համար ավանդաբար բնորոշ՝ ո՛չ թե անհատին, այլ կոլեգիալությանը

տրվող նախապատվությունը: Նախընտրական քարոզչության շրջանում ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն անձամբ իրեն հատկացված միագումար եթերաժամանակով հայտնվեց վերջին տեղում՝ զիջելով անգամ ՀԱՍԿ առաջնորդ Մովսես Շահվերդյանին: Դա ուղղակի հետեւանքն էր այն բանի, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ի տարբերություն մյուս բոլոր առաջին համարների, հրաժարվել էր բոլոր տեսակի հարցազրույցներից եւ բանավիճային հաղորդումներին մասնակցելուց:

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼՈՎ այս նախընտրական քարոզարշավը լուսաբանվել է «ԱԼՍ»-ով, որը 7 կուսակցությունների/դաշինքին տրամադրված միագումար եթերային ժամանակի հաշվարկով ավելի քան երկու անգամ գերազանցել է ակտիվությամբ իրեն հաջորդած «Երկիր Մեդիա» եւ «Կենտրոն» հեռուստաալիքներին: Ընդամին, «ԱԼՍ»-ով բոլոր կուսակցությունների/դաշինքին տրամադրված միագումար եթերային ժամանակի 62.1%-ը բաժին է ընկել ԺԿ-ին: Բնութագրական է, որ ընտրությունների հանդեպ ուշադրությամբ 3 առաջատար հեռուստաալիքները, ինչպես վերը նշվեց, դրսևորել են բացահայտ քաղաքական նախընտրություններ: Այս փաստը կարելի է մեկնաբանել որպես վկայություն այն բանի, որ հեռուստաալիքների ձգտումը՝ աջակցել այս կամ այն կուսակցության հաղթանակին, ընտրություններն ակտիվորեն լուսաբանելու ավելի զորեղ խթան հանդիսացավ, քան հասարակայնությանը քաղաքական կարեւոր իրադարձության մասին տեղեկացնելու առաքելությունը:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ընտրությունների առավել հավասարակշիռ լուսաբանում եղել է Հ1-ի եթերում: Կուսակցությունների/դաշինքին հատկացված խմբագրական լուսաբանումների եթերաժամանակը բաշխվել է համեմատաբար հավասարաչափ. ՀԱԿ-ը (ամենամեծ ծավալը) ստացել է 4,639.9 վրկ, իսկ ՀԱՍԿ-ը (ամենափոքր ծավալը)՝ 2,392.7 վրկ: Հիշատակումների հաճախականությամբ Հ1-ում առաջինը եղել է ՀՀԿ-ն (67), վերջին տեղում՝ ՀԱՍԿ-ը (15): Հ1-ով հիշատակումների 97.4% -ը կրել է չեզոք բնույթ:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր կուսակցությունների/դաշինքին հատկացված եթերային ժամանակի առումով լուսաբանման հավասարակշռությամբ Հ1-ին հաջորդել է Հ2-ը, որին հետեւել են «Արմնյուզ»-ը, «Շանթը», «Կենտրոնը», «Երկիր Մեդիա»-ն եւ «ԱԼՍ»-ն:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր կուսակցությունների/դաշինքի հիշատակումների առավել հավասարակշռությամբ Հ1-ից հետո եղել է «Շանթը»: Նրանց հետեւել են Հ2-ը, «Արմնյուզ»-ը, «ԱԼՍ»-ն, «Կենտրոնը» եւ «Երկիր Մեդիա»-ն:

Վերջապես, հավասարակշիռ լուսաբանման երրորդ ցուցանիշով՝ նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների/դաշինքի առավել չեզոք հիշատակումների հաշվարկով, առաջինը եղել է «Երկիր Մեդիա»-ն (99%)՝ շրջանցելով անգամ Հ1-ին (97.4%): Երրորդ տեղում եղել է «Շանթը» (97.3%), այնուհետեւ եկել են «Արմնյուզ»-ը եւ «Կենտրոնը» (96.3-ական%), Հ2-ը (96%), «ԱԼՍ»-ն (90.6%): Ընդամին, «Արմնյուզ»-ի եթերում արձանագրված 10 նշանային/բնութագրիչ հիշատակումներից 9-ը եւ Հ2-ի եթերում արձանագրված 13 նշանային/բնութագրիչ հիշատակումներից 12-ը վերաբերել են ՀՀԿ-ին, եւ բոլորն էլ եղել են դրական: Այլ կերպ ասած, եթե հանրապետականների հանդեպ այս հեռարձակողների հատուկ համակրանքը չլիներ, նրանց հիշատակումների հավասարակշռության ցուցանիշը շատ ավելի լավ տեսք կունենար:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ինչպես նախընտրական քարոզարշավի նախաշեմին, այնպես էլ բուն նախընտրական քարոզչության շրջանում կուսակցությունների/դաշինքի եւ դրանց ներկայացուցիչների վերաբերյալ բացասական

բոլոր հիշատակումները եղել են ո՛չ թե հեռուստալրագրողների կողմից, այլ հնչել են բանավիճային եւ լրատվական հաղորդումների մասնակիցների կարծիքներում: Մինչդեռ դրական հիշատակումներ որոշ դեպքերում հնչել են նաեւ լրագրողների շուրթերից:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ մասին նշանակալի չափով թույլ է տվել դատել նաեւ դիտարկված հեռուստաալիքների բանավիճային ծրագրերի հյուրերի ցուցակը: Այս առումով նախընտրական քարոզչության շրջանում առավել հավասար մասնակցություն է ապահովել Հ1-ը (ընտրություններին մասնակցած բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները հրավիրվել են 1-2- ական անգամ) եւ Հ2-ը (2-3-ական անգամ): Միաժամանակ, առավել շատ հյուրեր են մասնակցել «Երկիր Մեդիա»-ի բանավիճային հաղորդումներին, ինչի շնորհիվ նույնիսկ ամենաքիչը հրավերներ ստացած ՀԱՍԿ-ը մասնակցել է այս հեռուստաալիքի 5 հաղորդման: Չորս քաղաքական ուժեր չեն հրավիրվել (կամ չեն ցանկացել մասնակցել) «Արմնյուզ»-ի բանավիճային հաղորդումներին, 2-ական «ԱԼՍ»-ի, «Կենտրոնի» եւ «Շանթի»:

Դիտարկված բոլոր 7 հեռուստաալիքներով բանավիճային հաղորդումներին առավել հաճախ մասնակցել են ՀՅԴ -ի (30 անգամ), ամենաքիչը՝ ՀԱԿ-ի (17) եւ ՀԱՍԿ-ի (9) ներկայացուցիչները:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ համար հատկանշական է եղել այն, որ մասնակից քաղաքական ուժերի նախընտրական քարոզարշավները, ինչպես նաեւ դրանց լուսաբանումը կրել է դրական բնույթ: Այլ կերպ ասած, թեկնածուները ձգտել են հիմնականում խոսել իրենց արժանիքների մասին, այլ ոչ թե արժեզրկել մրցակիցներին՝ ինչպես դա տեղի ունեցավ 2008-ի նախագահական ընտրությունների ժամանակ: Հեռուստաալիքները, հատկապես նախընտրական քարոզարշավի երկրորդ կեսին, ձգտում էին թեկնածուներին ակտիվորեն հրավիրել իրենց բանավիճային հաղորդումներին: Եւ եթե քաղաքական ուժերը հավասարապես արձագանքեին այդ հրավերներին, թեկնածուների եւ նրանց ծրագրերի մասին ընտրողների տեղեկացվածության մակարդակը բավական բարձր կլիներ: Ընտրարշավի վերջին օրերին, փաստորեն, դիտարկված բոլոր հեռուստաալիքներում եթեր էին գնում բանավիճային հաղորդումների 2-3-ական թողարկումներ: Առանձնակի հագեցած էր վերջին երկու օրերի՝ մայիսի 28-29-ի եթերը:

Դիտարկված հեռուստաալիքներից ոչ մեկը չի խախտել մայիսի 29-ի ժամը 24.00-ից հետո քարոզչության արգելման օրենսդրական կարգը:

ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ լիովին օգտագործել են Հ1-ով քաղաքական գովազդին հատկացված անվճար եթերաժամանակը: Մինչդեռ այդ նույն հեռուստաալիքով հատկացված վճարովի քաղաքական գովազդից օգտվել են 7 կուսակցություններից/ դաշինքից միայն 4-ը: ՀՀ ԿԸՀ 2009թ. մայիսի 2-ի որոշմամբ Հ1-ով սահմանված քաղաքական գովազդի չափաբաժնին սերտորեն մոտեցել են ՀՀԿ-ն, ՕԵԿ-ը, ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը: Իսկ ՀԱՍԿ-ը մտադիր չի եղել օգտվել վճարովի եթերից, լինի դա հանրային, թե՛ մասնավոր հեռարձակող:

«ԱԼՍ»-ի եթերում իրենց նախընտրական քարոզչանյութերը տեղադրել են ընտրություններին մասնակցած 7 քաղաքական ուժերից 5-ը, «Երկիր Մեդիա»-ի, «Կենտրոնի» եւ «Շանթի» եթերում՝ 4-ական, իսկ Հ2-ի եւ «Արմնյուզ»-ի եթերում՝ 3-ական: Վճարովի քաղաքական գովազդի պահանջվածության առումով առաջատարը եղել է «Երկիր Մեդիա»-ի հեռուստաեթերը, որին հետեւել են Հ1-ը, «Կենտրոնը», «Շանթը», Հ2-ը, «ԱԼՍ»-ն եւ «Արմնյուզ»-ը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ «Երկիր Մեդիա»-ով քարոզչական նյութերի կեսից ավելին տեղադրել է մեկ կուսակցություն՝ ՀՅԴ-ն:

Դիտարկվող բոլոր 7 հեռուստաալիքներով վճարովի քաղաքական գովազդից ամենից շատն օգտվել է ԲՀԿ-ն: Այս ցուցանիշով երկրորդը եղել է ՀՀԿ-ն, երրորդը՝ ՕԵԿ-ը: Իշխող կոալիցիայի անդամ այս երեք կուսակցություններին բաժին է ընկել նախընտրական քարոզարշավի ընթացքում դիտարկված բոլոր հեռուստաալիքներում տեղադրված վճարովի քաղաքական գովազդի ավելի քան երեք քառորդը: Չորրորդ տեղում գտնվող ՀՀԴ-ն վճարովի հեռուստատեսքերից օգտվել է միայն մեկ հեռուստաալիքով՝ «Երկիր Մեդիա»-ով: Նույն կերպ է վարվել նաև ԺԿ-ն՝ իր վճարովի քարոզչական նյութերը դնելով միայն «ԱԼՄ»-ի եթերում: ՀԱԿ-ն իր քարոզչական նյութերը հեռարձակել է Հ1-ով եւ դիտարկված մյուս 6 մասնավոր հեռուստաալիքներից երեքով:

Ներկայացվող տվյալները վկայում են այն մասին, որ նախընտրական քարոզչության նպատակով վճարովի եթերից լիովին կարողացել են օգտվել միայն իշխանության մաս կազմող քաղաքական ուժերը: Դա հերթական անգամ այժմեական է դարձնում վաղուց բարձրացված հիմնախնդիրը՝ քաղաքական գովազդի չհիմնավորված գերբարձր գների մասին, ինչը չի նպաստում նախընտրական պայքարի հավասար պայմանների ապահովմանը:

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ, դիտարկման ընթացքում արձանագրվել են մի ամբողջ շարք հեռուստանյութեր, որոնք անուղղակի ցուցանիշներով երբեմն բավական պարզորոշ կերպով կարող էին ընկալվել որպես նախընտրական քարոզչություն, սակայն եթեր են գնացել առանց համապատասխան լուսագրի: Որոշ դեպքերում դրանք կարող էին համարվել օրենսդրության խախտում, որոշ դեպքերում՝ ոչ: Սակայն դիտարկողներին հայտնի չեն եղել օրինակներ՝ համապատասխան դեպքերի առնչությամբ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից որել է ուսումնասիրության մասին: Մինչդեռ այդ մարմնին է վերապահված հեռարձակող ՁԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանման օրինականության վերահսկողությունը:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ օրենսդրական ոչ հստակ ձեւակերպումներն ու բացերը եւ օրենքների կիրարկման նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայությունը, հեռարձակման ոլորտում առկա՝ բազմակարծության պակասի հետ մեկտեղ, թույլ չեն տալիս վերացնել ընտրությունների լուսաբանման ավանդական թերությունները:

ԱՌԱԶԻՆ ՀԵՐԹԻՆ, արդիական է մնում քաղաքական գովազդի կարգավորմանը վերաբերող հստակ օրենսդրության բացակայությունը: Փաստորեն, քիչ թե շատ հստակորեն կարգավորվում է միայն նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածը, որը Երեւանի ավագանու ընտրությունների պարագայում տեւեց ընդամենը 28 օր: Մինչդեռ նախորդ ընտրությունների փորձից լավ հայտնի է, որ իրականում քաղաքական մրցակցությունը սկսվում է պաշտոնական նախընտրական քարոզարշավից շատ ավելի վաղ, եւ հեռուստաալիքները վերահսկող, դրանց վրա ազդեցություն ունեցող կամ հատուկ հարաբերություններում գտնվող քաղաքական կուսակցությունները եւ թեկնածուները մեծ առավելություն են ստանում իրենց մրցակիցների հանդեպ: Նախընտրական քարոզարշավի կարճատեւ ժամանակահատվածը, երբ ՁԼՄ-ները մատչելի են դառնում բոլոր կուսակցություններին եւ թեկնածուներին, բավարար չի լինում բաց թողածը լրացնելու համար:

ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԻՆ, օրենսդրության պահպանության հանդեպ պատշաճ վերահսկողության եւ կարգավորման բացակայության արդյունքում անհետեւանք են մնացել այն դեպքերը, երբ ի հայտ են եկել ՀՀ Ընտրական օրենսդրության 20-րդ հոդվածի՝ մասնավորապես, կուսակցությունների/դաշինքի նախընտրական քարոզարշավների մասին տեղեկացնող լրատվական հեռուստառադիոհաղորդումներում արդար եւ հավասար պայմանների ապահովման

անհրաժեշտության մասին դրույթների անուղղակի խախտումներ: Այդ լուսաբանումը պետք է լինի անկողմնակալ եւ մեկնաբանություններից զերծ:

Այսպես, 2009թ. մայիսի 17-ին ՀՀ-ում եւ 2009թ. մայիսի 18-ին՝ «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «ԱԼՄ» եւ ՀՀ հեռուստատալիքներով ցուցադրվել է միեւնույն տոնական ռեպորտաժը Հայրենական մեծ պատերազմի վետերանների հետ ԲՀԿ-ի առաջնորդ Գագիկ Ծառուկյանի կազմակերպած հանդիպման մասին: ՀՀ, «Կենտրոն», «Շանթ» եւ «ԱԼՄ» հեռուստատալիքներով այդ տեսանյութը (մոնտաժային չնչին տարբերություններով) ցուցադրվել է լրատվական թողարկումներում, իսկ «Երկիր Մեդիա» եւ ՀՀ հեռուստատալիքներով՝ որպես առանձին տեսանյութ՝ այլ հաղորդումների շարքում: Դա կարելի է բնութագրել որպես կողմնակալ, ընտրությունների նախաշեմին կուսակցության մասին կանխավ դրական կարծիք ձեւավորող տեսանյութ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ տեսանյութը եթեր էր գնացել տարբեր օրեր եւ մի քանի հեռուստատալիքներով, դա պետք է որ ուշադրություն գրավեր՝ որպես հնարավոր թաքնված քաղաքական գովազդ:

Նույնպիսի տպավորություն է գործել 2009թ. մայիսի 22-ին «Կենտրոն» եւ «ԱԼՄ» հեռուստատալիքներով հեռարձակված ռեպորտաժը Գեղարվեստի ակադեմիայի ուսանողների դիպլոմային աշխատանքների շնորհանդեսի մասին: Այդ միջոցառման հովանավորը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանն էր:

ԵՐՐՈՐԴ, հիմքեր կան ենթադրելու, որ այս նախընտրական քարոզարշավի ընթացքում խախտվել է նաեւ ՀՀ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 11-րդ հոդվածը: Վերջինս սահմանում է, որ քարոզչական նյութերի հեռարձակումը, որոնք կուսակցությունների/դաշինքի կողմից տրամադրվում են նախընտրական հիմնադրամների միջոցների հաշվից, էկրանին անպայման պետք է ուղեկցվեն «նախընտրական քարոզչություն» անընդհատ լուսագրով (Հանրային հեռուստաընկերության դեպքում այդ կարգը գործում է նաեւ քարոզչության համար տրամադրված անվճար եթերի դեպքում): Վերը ասվածից բացի, այդ մասին են վկայում նաեւ մի շարք այլ օրինակներ:

Այսպես, 2009թ. մայիսի 24-ին «Կենտրոն» հեռուստատալիքի «Էպիկենտրոն» լրատվական ծրագրի կիրակնօրյա թողարկման մեջ եթեր է գնացել մի տեսանյութ «Օրինաց երկրի» վերաբերյալ, որտեղ գովաբանվել է կուսակցության եւ դրա առաջնորդ Արթուր Բաղդասարյանի գործունեությունը: Այդ տեսանյութի քիչ ավելի ծավալուն տարբերակը 2009թ. մայիսի 28-ին ցուցադրվել է «Երկիր Մեդիա» հեռուստատալիքով (համապատասխանաբար՝ 953 եւ 966 վայրկյան): 2009 թ. մայիսի 29-ին ՕԵԿ-ի առաջնորդ եւ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը «ԱԼՄ» հեռուստատալիքի «Այցեքարտ» հաղորդման հյուրն է եղել: Վերջում հաղորդավարն ասել է, որ հաղորդման ավարտից հետո կցուցադրվի տեսաֆիլմ Արթուր Բաղդասարյանի մասին, եւ եթեր է գնացել այն նույն հեռուստանյութը, որը ցուցադրվել էր «Կենտրոնով» եւ «Երկիր Մեդիա»-ով, բայց շատ ավելի ընդարձակ տարբերակով (1,193 վրկ): Ըստ որում, այդ տեսանյութի միայն 368-րդ վայրկյանին էր էկրանին հայտնվել «նախընտրական քարոզչություն» լուսագիրը (այդ իսկ պատճառով դիտարկողները մնացած 825 վայրկյանը գրանցել էին ՕԵԿ-ի վճարովի գովազդի հաշվին): 2009թ. մայիսի 29-ին «Արմնյուզ» հեռուստատալիքի եթերում, «Տեմպուս» հաղորդման մեջ, որի հյուրը Հեղինե Բիշարյանն էր (ՕԵԿ-ի ընտրացուցակի 1-ին համարը), հաղորդավարը տեղեկացրել էր, որ հաղորդման ավարտից հետո կցուցադրվի ֆիլմ ՕԵԿ-ի առաջնորդ Արթուր Բաղդասարյանի մասին: Այնուհետեւ եթեր էր գնացել վերը հիշատակված ֆիլմը (966 վրկ տեւողության տարբերակով):

Թվարկված բոլոր դեպքերը դիտարկողները գնահատում են որպես ուղղակի վկայություններ այն մասին, որ «Օրինաց երկիր» կուսակցության նախընտրական քարոզչանյութ հանդիսացող ֆիլմը մեծ մասամբ հեռարձակվել է առանց համապատասխան լուսագրի, ինչն օրենքի բացահայտ խախտում է: Սակայն դա որեւէ հետեւանք չի ունեցել:

2009թ. մայիսի 28-ին «Կենտրոն» հեռուստաալիքի «Էպիկենտրոն» լրատվական ծրագրով ցուցադրվել է ռեպորտաժ ՕԵԿ-ի նախընտրական հանրահավաքի մասին, որին նախորդել է հաղորդավարի կարճ անոնսը: Ինքը՝ տեսանյութը, եթեր է գնացել տեսաշարով, առանց լրագրողական տեքստի: Նույն նյութը (մոնտաժային փոքր տարբերությամբ) նույն օրը եթեր է գնացել «ԱԼՄ»-ի «Օրեցօր» լրատվական ծրագրով: Դիտարկողների խումբն այս դեպքերում նույնպես հիմքեր է ունեցել համարելու, որ լրատվական սյուժեի անվան տակ եթեր է հեռարձակվել քարոզչական տեսանյութ:

ՉՈՐՐՈՐԴ, եթերում այն քարոզչական նյութերի ցուցադրումը, որոնք չեն ուղեկցվել համապատասխան լուսագրերով, խնդրահարույց են ՀՀ Ընտրական օրենսգրքի 128-րդ հոդվածի կիրարկման առումով, որը սահմանում է. «Համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուները նախընտրական քարոզչություն իրականացնելու համար իրավունք ունեն օգտագործել միայն իրենց նախընտրական հիմնադրամի միջոցները»: Մինչդեռ հիմքեր կան ենթադրելու, որ թաքնված քարոզչանյութերի մեծ մասի արտադրման եւ եթեր հեռարձակման ծախսերը նախընտրական հիմնադրամներից չեն կատարվել: Այսօրինակ նյութերի հանդեպ համապատասխան մարմինների կողմից պատշաճ ուշադրության բացակայությունը թույլ չի տալիս բացահայտել Ընտրական օրենսգրքի 128-րդ հոդվածի ոչ հազվադեպ խախտումները:

ՀԻՆԳԵՐՈՐԴ, թաքնված քարոզչական բնույթ ունեցող նյութերի մի մասը եթեր են տրվել մինչ նախընտրական քարոզարշավի սկիզբը, չնայած քաղաքական գովազդը թույլատրվում է միայն այդ ժամանակահատվածում:

2009թ. ապրիլի 16-ից մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում դիտարկված հեռուստաալիքներում բազմիցս հայտնվել են կուսակցությունների գործունեությանն առնչվող հայտարարություններ, որոնք անմիջականորեն չեն վերաբերվել ընտրություններին, սակայն քվեարկության մոտեցող օրվա հաշվարկով, թողել են նախընտրական քարոզչությանը համարժեք կամ նմանատիպ ազդեցություն: Այդ հայտարարությունները վերաբերել են ինչպես կուսակցությունների՝ ընտրություններից անկախ իրականացվող գործունեությանը, այնպես էլ նախընտրական վարկանիշի բարձրացմանն այս կամ այն չափով միտված նախաձեռնություններին:

Մասնավորապես, 2009թ. ապրիլի 16-ին՝ 8 անգամ, ապրիլի 22-ին՝ 5 անգամ, ապրիլի 23-ին՝ 3 անգամ, «Կենտրոն» հեռուստաալիքի եթերով ցուցադրվել է «Բարգավաճ Հայաստանի» կողմից կազմակերպված առողջապահական ակցիայի մասին հայտարարությունը:

2009թ. ապրիլի 16-ից սկսած՝ մեկ շաբաթ շարունակ, ամեն օր «Երկիր Մեդիա»-ի եթերում հայտարարություն է գնացել ՀՀԴ երիտասարդական միության եւ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության կողմից կազմակերպված՝ ապրիլի 23-ի ջահերով երթի մասին: Այդ նույն հայտարարությունը եղել է նաեւ «ԱԼՄ»-ի եթերում:

2009թ. ապրիլի 20-ին «ԱԼՄ»-ով երկու անգամ հայտարարություն է հեռարձակվել այն մասին, որ ԱԺ առաջնորդ Տիգրան Կարապետյանը ապրիլի 24-ին մոնոպառնություն է կազմակերպում «Հաղթանակ» զբոսայգում:

Բացի դրանից, 2009թ. ապրիլի 23-ին «Կենտրոն» հեռուստաալիքի «Էպիկենտրոն» եւ «Էպիկենտրոն. հատուկ ռեպորտաժ» հաղորդումների ժամանակ, ինչպես նաեւ 32-ի «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումից առաջ եթեր է գնացել միեւնոյն սյուժեն (մոնտաժային փոքր տարբերությամբ)՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության երիտասարդական թելի նոր անդամների ընդունելության մասին:

Վերոհիշյալները կարելի է դիտարկել որպես նախընտրական շրջանում կուսակցությունների նախընտրական վարկանիշի բարձրացմանը միտված նյութեր: Սակայն օրենսդրության ակնհայտ անկատարությունը թույլ չի տալիս խուսափել կամ միջոցներ կիրառել նման ձեռնարկումների դեմ, որոնք հավելյալ, օրենսդրական ռեսուրսներով չնախատեսված միջոցներով, նախընտրական քարոզարշավի իրականացման անհավասար պայմաններ են ստեղծում:

ՎԵՑԵՐՈՐԴ, դիտարկման ամբողջ ժամանակահատվածում եթեր են գնացել ֆիլմեր, լրատվական սյուժեներ, հայտարարություններ կուսակցությունների եւ քաղաքական գործիչների բարեգործական եւ այլ բնույթի ակցիաների մասին, հնչել են այս կամ այն քաղաքական ուժը փառաբանող երգեր: Ընդ որում, դա կատարվել է որոշակի հեռուստաալիքներով եւ որոշակի քաղաքական ուժերի կողմից: Այդ երեւույթը մեկ անգամ եւս ընդգծում է, որ քաղաքական պայքարի անհավասար պայմաններ ստեղծվել են ինչպես նախընտրական քարոզարշավից առաջ ընկած ժամանակահատվածում, որը չի կարգավորվում ընտրական օրենսդրությամբ, այնպես էլ մայիսի 2-ից հետո, երբ ՀՀ Ընտրական օրենսգրքի եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի վերոհիշյալ հոդվածները կարող էին կիրարկվել: Այդ ֆիլմերը, սյուժեները եւ այլն, համապատասխան ատյանների կողմից չեն դիտարկվել որպես նախընտրական քարոզարշավի մաս, չնայած քաղաքական պայքարի վրա պաշտոնական նախընտրական քարոզչությանը համարժեք ազդեցություն են ունեցել:

Այսպես, 2009թ. մայիսի 1-ին, 4-ին, 6-ին, 7-ին եւ 22-ին «Կենտրոն» հեռուստաալիքով հեռարձակվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը զովաբանող երգի տեսահոլովակ:

2009թ. մայիսի 7-ին Հ1-ի եթերում կրկին ցուցադրվել է Հայկական բանակի 16-ամյակին նվիրված համերգը (2008թ. հունվարի 28-ի տեսագրությունը): Համերգի ժամանակ հնչել է «Առաջ, Հայաստան» երգը, որը 2008թ. նախագահական ընտրություններից ի վեր ընկալվում է որպես ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանի եւ Հայաստանի հանրապետական կուսակցության նախընտրական քարոզարշավի խորհրդանիշ:

2009թ. մայիսի 22-ին «Երկիր Մեդիա» հեռուստաալիքով ցուցադրվել է Դաշնակցությանը զովաբանող մի երգի տեսահոլովակ, որը, փաստորեն, 2008թ. նախագահական ընտրություններում կուսակցության քարոզարշավի մաս էր կազմել:

Ինչպես երեւում է այս օրինակներից, սույն քարոզչական ռեսուրսն օգտագործվել է այն կուսակցությունների կողմից, որոնք ունեն առանձնահատուկ հարաբերություններ կամ ազդեցություն համապատասխան հեռուստաալիքների վրա, ինչի մասին վկայում են նաեւ ընտրություններին մասնակցած այդ քաղաքական ուժերի՝ վերը բերված հիշատակումների քանակական ցուցանիշները տվյալ հեռուստաալիքներում: Ակնհայտ է, որ այս երեւույթը վկայում է ոչ միայն օրենսդրության անհետեւողական կիրարկման, այլ նաեւ վերջինիս անկատարության, կշռադատված, մանրամասն եւ հստակ ձեւակերպումների բացակայության մասին:

ՅՈՒԹԵՐՈՐԴ, ինչպես նախորդ ընտրությունների ժամանակ, այս անգամ էլ ձեւական հիմքեր՝ խոսելու Ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի խախտումների մասին՝ որպես

թեկնածուներ գրանցված լրագրողների կողմից ընտրությունները լուսաբանելու եւ հեռուստառադիոհաղորդումներ վարելու արգելքի մասին, չեն եղել: Միաժամանակ շարունակում է անհանգստություն պատճառել «ԱԼՄ» հեռուստաալիքը: Դրա սեփականատեր, ԺԿ առաջնորդ Տիգրան Կարապետյանը նախընտրական քարոզարշավի ժամանակ դադարել էր վարել իր բազմաթիվ հեռուստահաղորդումները, սակայն նրա՝ էկրանին հայտնվելու հաճախականության վրա, դա գրեթե չէր ազդել: Նա սկսել էր հանդես գալ որպես հյուր՝ այն նույն հեռուստահաղորդումներում, պահպանելով արտահայտվելու այն նույն հնարավորությունը, ինչն ուներ մինչեւ նախընտրական քարոզարշավի սկսվելը:

ՈՒԹԵՐՈՐԴ, վերոհիշյալ բոլոր երեւոյթներն իրենց հերթին ձեւավորում են մեկ խոշոր հիմնախնդիր՝ հայկական հեռուստաթերի ահագնացող կուսակցականացվածությունը: Դա արտահայտվում է այն բանում, որ հեռուստաընկերություններ կամ դրանց վրա ազդեցության բազմազան լծակներ ունեցող կուսակցությունները եւ քաղաքական գործիչները, հատկապես ընտրությունների շրջանում, ինտենսիվորեն օգտագործում են դրանք՝ ի շահ իրենց քաղաքական նպատակների: Նկատի առնելով հեռարձակող ՋԼՄ-ների ոլորտի վերջին գործընթացները, որոնց արդյունքում հեռուստաընկերությունների սեփականատիրությունը եւ դրանց վրա ազդեցությունն առավել մեծ չափով է կենտրոնանում իշխող վերնախավի ձեռքում, ընդդիմության համար ավելի դժվար է լինում մրցակցել իշխանության հետ՝ ընտրությունների ժամանակ եւ դրանց նախորդող ժամանակաշրջանում՝ որոնք ազդեցություն են թողնում ընտրողների քաղաքական նախապատվությունների վրա:

